

խողովակներէ միջոցները զմուռով լցնել :
 Այսպէս փոքրիկ խողովակը իւր այն ծայրովը որ շրջանակի մէջն է, մեծ խողովակի հետ կարկատուածի պէս կը լինի և չի խաղալ նորա մէջ կամ դուրս գալ :

Այժմ բոլորովին պատրաստ է ջրհանը : Բայց ի՞նչպէս պիտի գործէ սա : Մխոցը ներս մտելով հասցնենք մինչև նորա վարի ծայրում եղած դռնակին, իսկ փոքրիկ խողովակի վարի ծայրը գնենք ջրի մէջ, և այդ գրութեան մէջ թողնենք նորան միշտ : Ահսե՛ք վեր բարձրացնել մխոցը : Մխոցը վեր բարձրանալիս մեծ խողովակի մէջի եղած օղը կանօսրանայ, և վերեւի (մխոցի վերայ եղած) դռնակը կը խփուի դրսի օղի ձնշմամբը : Այս մի և նոյն միջոցին ստորին դռնակը (որ փոքր խողովակի վերայ է) կը բացուի ջրի ձնշմամբը, ջուրը կսկսի բարձրանալ անօսրացած տարածութեան մէջ՝ և լցնել լայն խողովակը : Արբոր սկսե՛ք վար իջեցնել մխոցը՝ նա կը ձնշէ ջրի վերայ, և ջուրը ստորին դռնակի վերայ հրելով կը փակէ նորան, իսկ վերեւինը այդ ժամանակ կը բացուի : Արբ որ մխոցը կը հասնէ լայն խողովակի յատակին՝ բոլոր ջուրը վերին դռնակով դուրս կը գայ և կը հաւաքուի մխոցի վերայ : Արկորդ անգամ երբոր մխոցը կը բարձրանայ, ստորին դռնակը դարձեալ կը բացուի, իսկ վերինը կը փակուի և ջուրը դարձեալ կսկսի բարձրանալ : Հիմի մնում է միայն որ մխոցի վերայ հաւաքուող ջուրը մի տեղից դուրս բղխի : Կորա համար մեծ խողովակից մի բերան ևն բաց անում և այն տեղից սկսում է դուրս բղխել ջուրը, բայց այդ ջրի դուրս գալու տեղը ջրի երեսից ՅԳ ոտնաչափից աւելի բարձր

չի կարող լինել, որովհետև այս տեսակ ջրհաններով միայն այդչափ կարելի է բարձրացնել ջուրը : Այս տեսակ ջրհանները միայն ջրհորներից ջուր բարձրացնելու համար ևն գործ գնում, կամ երբ որ աների վարին յարկերում խոր նկուղները ջրով լցվում են՝ դարձեալ այսպիսի գործիքով ևն վեր քաշում նորա ջուրը :

Չուրը երեսուն ոտնաչափից աւելի բարձրացնելու համար, գործ ևն ածում Ըբէ ճնշարան անունով մեքենան : Այդ առնենք էլի այնպիսի մի լայն խողովակ, ինչպէս որ ջրհանինն էր՝ և նորա յատակից երկու ծակ բանանք, մինի մէջ անցնենք մի ուղիղ խողովակ, այդ կը լինի մի և նոյն փոքր խողովակը, որ սենէր ներքեւից ջրհանը, այս ևս նորա պէս ջրի մէջ կը լինի գրբուած, իսկ երկրորդ բացուածքի մէջ կը մտցնենք կորացրած ապակու մէկ սրունքի ծայրը, իսկ միւս սրունքը մի ուրիշ դարձեալ լայն խողովակի մէջ, որի վերին ծայրը հաղորդուած է մէկ երկար մետաղէ կամ սեղնի խողովակի հետ : Առաջին լայն խողովակի մէջ դռնակը խփում է փոքրիկ խողովակի բերանը, երկրորդ լայն խողովակի մէջի դռնակը՝ կորացրած խողովակի բերանն է խփում : Այդ դռնակները այնպէս ևն շինվում՝ ինչպէս առաջ արդէն ասել ենք : Բացի այս մխոցը՝ որ առաջին լայն խողովակի մէջն է շարժում, իւր վերեւից ծակ չունի, ինչպէս կար ջրհանի մխոցի վերայ : Խողովակները միմեանց մէջ ամուր մնալու համար, հարկաւոր է նոցա արանքները մեղրամմով կամ զմուռով լցնել, որ միմեանցից կպած մնան :

Մխոցը իջեցնելիս օղը իւր ծանրութեամբ փակում է առաջին խողովակի

դռնակը և ձրառում է գէպի կոր խողովակը, ուր սեղ բաց է անում դռնակը և դուրս է դաշխ երկայն խողովակի միջովը: Իսկ մըխողը բարձրանալիս առաջին խողովակի մէջ օդը անօսրանում է, գէպի անօսրացած տարածութեանը զիմում է երկրորդ խողովակի օդը և փակում է դռնակը: Մի և նոյն ժամանակ ջուրը դրսի օդից ձնշուելով կը բարձրանայ խողովակովը, կը բանայ դռնակը և կը մանէ լայն խողովակի մէջ: Մխողը երկրորդ անգամ լիջնելիս՝ ջրի խողովակի դռնակը կը փակուի: Գռնակի վերայ մնացած ջուրը կը մանի կոր խողովակի մէջ, կը բանայ այն տեղի դռնակը և կսկսի վեր բարձրանալ: Այս կերպով երկրորդ խողովակի մէջ հետ գհետէ աւելի ջուր կը հաւաքուի և այն տեղից որ և իցէ ձիւռն խողովակի միջնորդութեամբ կարելի է տանել և բարձրացնել որքան կամիս:

Բորը այս տեսակ ջրհաններից ջուրը բղետում է միայն այն ժամանակ երբոր մըխողը ցած է լիջում: Աքբա այն անյարմարութիւնը ունին, որ ընդմիջելով են հանում ջուրը, շարունակ չեն դուրս բըղխում: Այս տեսակ ջրհանները անյարմար են մանաւանդ հրդեհ հեղի ժամանակ, երբ հարկաւոր է լինում շարունակաբար ջուր թափել այրուող տեղերի վերայ, որ շուտով հանգչին: Բայց թէ ի՞նչ տեսակ սարքելու է մեքենան, որ շարունակաբար ջուր հանէ միջեցը: Այդ կարելի է իմանալ ծանօթանալով հրէշներէ շինուածքի հետ, որոնք մի մխոցի տեղ երկուսը ունին և նոքա փոխադարձաբար լցուցանում են իրարու ընդհատուիլը, այ՛իմքն մէկը իջնելիս՝ միւսը բարձրանում է և այսպէսով ջուրը շարունակ է դուրս գալիս:

Օդը խտացնելու կամ թանձրացնելու համար էլ գործ են դնում օդի ճնշարան: Գորս շինուածքը բոլորովին նման է ջրհանի շինուածքին, այս զանազանութեամբ միայն, որ դռնակները (այն կաշիները՝ որոնք դռնակի պաշտօն են կատարում) վարի կողմիցն են լինում կպցրած և գէպի վարի կողմն են բացվում: Մը ամանի մէջ որ ուզում են օդը թանձրացնել, խողովակի ծայրը դնում են նոյն ամանի մէջ օդախիտ կերպով: Մխողը իջեցնելիս, ձնշարանի մէջ օդը խտանում է և բաց անելով վարի դռնակը, մանում է ամանի մէջ, այդ մի և նոյն միջոցին վերի դռնակը փակվում է օդի ձնշումից: Արբ բարձրացրեննք մխոցը, ամանի թանձրացած օդը կը խփէ վարի կողմի դռնակը, մինչդեռ վերինը կը բացուի դրսի օդի ճնշելովը, և այն տեղից օդը կը լցնուի խողովակի մէջ: Այս կերպ բարձր ու ցածը անելով մխոցը, մենք կարող ենք թանձրացնել օդը ամանի մէջ: Այս տեսակ ձնշարաններն են գործ դնում օդախան հրացանների օդը թանձրացնելու և ջրասոյղ զանգակի մէջ օդ հասցնելու համար, զոցա ճնշմամբն են և վեր ցայտում արհեստական ջրբուղիները կամ շատրուանները:

ԻՔ

Օդահան, Լէկեր, Սեկօն.

Եթէ ջրհանի խողովակը մի օդով լիքը ամանի մէջ դնենք և սկսենք ջրի պես վեր քաշել ամանի օդը, մխոցը ամեն անգամ բարձրանալիս՝ օդի քանակութիւնը կը պակասի ամանի մէջ, հետևաբար նորս մէջ եղած օդը համարեա թէ կը դատար-

կնուիս ոչորովին անօր տօրաճու թիւն մենք
 շենք սասանալ, պատճառ ինչքան կուզէ
 դարձանկենք, այսու սակնայնիւ էլի մի թիշ
 օր կը մնայ սակնի մեջ: Մտորարար խո-
 դովակը կորացնում են, որով նա ստա-
 նում է երկրորդ արուներ, այս երկրորդ ար-
 ըուները մոցնում են մի հաւասարապէս
 յգիւսած մետուցէ պնակի մեջ, իսկ այդ
 պնակը ծածկում են զանգակաձեւ սպաս-
 կեայ ծածկոցով, որոյ զօրունակներին ձարս
 են քուսում, որ աւելի խիտ կպչե պնակի
 վերայ: Այդ ծածկոցի տակն են գնում
 այն մարմինները, որոց վերայ կամենում
 են փորձ անել, թէ ինչ է պատահում նը-
 բանց օդ չեղած տեղը: Այս տեսակ գոր-
 ծերը անվում է օրահան: Ծածկոցին ա-
 ղում են նաև ընդունարան կամ օրահանի
 զանգակ: Ընդունարանի միջեց աւելի շուտ
 և պնակահատ կերպով օդը հանելու հա-
 մար երկու օդահան են շինում և միմեանց
 հետ միացնում: Այսպէս զօրով ըստ-
 Աթէ օդահանի զանգակի տակ զնենք
 մի ծանրաչափ և յետոյ սկսենք օդը զբա-
 տարկել, ծանրաչափի անդիկը իսկոյն կը
 ցածրանայ, բայց եթէ մի ծորակի միջնոր-
 դու թէւամբ, որ հենց ունի էլ խողովակը
 փոքր ինչ, օդ ներս թողնենք, անդիկը իս-
 կոյն կսկսի բարձրանալ: Այս ցոյց է սա-
 լիս, որ անդիկը օդի ճնշմամբ է որ ցածրա-
 նում ու բարձրանում է ծանրաչափի մեջ:
 Թա՛նունիք և այլ կենդանիք, երբ որ
 դրում են օդահանի զանգակի տակ, փոքր
 սափքը թուլանում են և վերջապէս զբրի-
 վում են կեանքից, բայց եթէ ժամանակը
 չանցկացրած, փոքր սափքը օդ ներս
 թողնուի նորա կսկսին վերակենդանանալ:
 Մորանից երևում է որ կենդանիների կեան-

քի համար օդ չգետք է: Այսպէս մամր
 հանգում է օդահանի զանգակի տակ, ոչ-
 թեմն այրելու համար յոյն պնակեւք է օդը:
 Աթէ մի ցատակ չուենցող զբաժակի բե-
 ըանք փանկու շտով սարսցնենք և գնենք
 բաց կողմով պնակի վերայ ու սկսենք օդը
 գնաւարկել, բաժակի միջեց փանկու շտը կը
 պատռի զբնի օդի ճնշմամբ: Այսինիս
 զանգակը որ դրած է պնակի վերայ, օդը
 գնաւարկում միջոցին այնպէս է կպչում
 պնակից, որ խիտ զգուսը է շինում պո-
 կել պնակից: Այսպէս սաչ զմամր
 Պազդեմուն ըլիան կիսագնաներ ստուած
 զործերով աւելի լուս է նկատւում, թէ
 որքան մեծ է զբնի օդի ճնշումը միայնա-
 կոյն վերայ, երբ որ նորա մեջ օդ չըկայ:
 Այս մտազրիմութիւն կիսագնաւոր արա-
 սում ենք երկու մեծագէ կիսագնաւից է
 բաղկացած, որոնք երբ որ իրար վերայ են
 դնում և մեջեց օդը դարբասիում, նորա
 այնպէս են կպչում մէկ մէկուց, որ հա-
 ղուար է շինում միմեանցից հետացնել:
 Այս զործերի հետողն է Պարիսիմուրի-
 ցի Օթթոյ Պարկերի պնակում մի սարդ:
 Սա իւր զործ թիւն մի կանգուն արանա-
 զիծ տալով վեր աւալ գնաց Պերտինանդ
 երբորդ կայսեր մօտ, որ նորան ցոյց տայ
 իւր կիսագնաների զօրութիւնը: Այր որ
 օդը հաննց և կիսագնաները կպան մէկ մէ-
 կուց, այնպէս որ մի քանի մարդ չը կարո-
 զացան պնակի ամենքն էլ մնացին սողչած:
 Պիսագնաների վերայ լայն օդահանը կային
 պտու տակով անհացրած, այդ օդահանը
 ընց հոսա պարան կպակցին և մի մի ձե-
 լեցին ամեն կողմից, որ նորա իրանց քա-
 շելովը բաժանեն կիսագնաները միմեան-
 ցից, բայց չը յստողեցաւ մարդիկը աւելի

ևս սկսան զարմանալ: Կտան ձիանց թիւ
 ւր շատացնել, երկու ձին շինեցին չորս,
 չորսը՝ ութը, յետոյ տասը, վերջացէս
 մինչև 20 ձի լծեցին, կիսապանները չը կա-
 բողացան իրարմէ բաժանել: Կարգիկը
 շուարած մնացին, էլ չիմացան ինչ անեն,
 շատերը կարծում էին մինչև անգամ թէ
 մի մոգական զորութեամբ երկօքին կիսա-
 դնաները միացել են և մի ձոյլ գունու են դա-
 ռել: Ուրիմն անհասարկ է դորան որ և է
 ուժով երկու կէտանել: Բայց գործիքի
 հեղինակը շատ լաւ էր խմանում գորա
 կատաճառը և իւր մտքումը ծիծաղում էր
 հանդիսականների վերայ: Եւ յժամ մենք էլ
 գիտենք արդէ, որ սա մի հասարակ բը-
 նական երևոյթ էր: Գրախ Դնչումն էր
 պատճառը և նա էր, որ թոյլ չէր տա-
 լիս բաժանուելու կիսադնաներին: Կորա
 Դնչման ուժը այնքան շատ էր, որ ոչ
 թէ քսանն այլ երեսուր ձիու զօրու-
 թիւն պէտք էր իւր ուժին դէմ գնելու
 համար: Կայտնի է, որ օղի Դնչումը այն-
 քան շատ է լինում մի մարմնի վերայ, որ-
 քան որ նոյն մարմնի ծաւալը մեծ է: Կար-
 դու մարմնը որ համարեա թէ 15 քանա-
 կուսի ասնաչափ երես ունի, 33, 200
 փունտ օղի Դնչման տակ է, բայց որ չիճբմ-
 լումը՝ ներկայ փորձից կարելի է պարզ
 սեանել, թէ ինչ կը նշանակէ ասմեն կողմից
 Դնչուիլը: Կարդու մարմնը լիքն է օդով,
 որ դրսի օղի հետ հաղորդակցութիւն ու-
 նի և նորա շտի խոտթիւն, թէ դա ևս
 դատարկ լինել ինչպէս օդահանի գործիքն
 է, այնուհետև կասկած չը կայ, որ կը ճըմ-
 լուէր օղի Դնչման տակ իրար մնա սիցմ
 Եւ աս անգամ հարկաւոր է լինում աս
 մաններն մէջ եղած հեղուկները մէկից միւ-

սի մէջ անզափոխել: Կորա համար ասան
 ձին գործիքն ի կան շինուած, որոնք աս-
 վում են անհոն և կէլը կամ սիփօնեան և լի
 վերեան խողովակն իւր ի վեր ասուածը մե-
 տաղից շինուած մի խողովակ է, որի մէկ
 ծայրը փոքր ինչ լայնացրած է, մէկէլ
 ծայրը բարակացրած, իսկ մէջ անզափոքր
 ինչ ունցրած: Կործածողը գորա լայն
 ծայրը դնում է իւր բերանի մէջ և դուրս
 է ծծում նորա միջից օղը, մի և նոյն ժա-
 մանակ բարակ ծայրը ընկղմելով հեղուկի
 մէջ: Ի վերի մէջի օղը անօրմնուակ և
 հեղուկը դրսի օղի ծնչմամբ բարձրանում
 է լի վերի միջով: Կիմայ բերանում եղած
 բացուածքը որ մատով խփուի և այնպէս
 դուրս քաշուի լի վերը, նորա մէջ եղած
 հեղուկը չի թափուիլ, ըստ որում վերեկից
 օղի Դնչում չը կայ, իսկ վարի կողմիցը կայ
 և այնպէս ուր կամիս կարող ես տանել և
 դատարկել մի այլ ամանի մէջ: Կայ
 Բայց երբոր հարկաւոր է լինում հե-
 ղուկը այդ ձևով դատարկել մի ուրիշ ամ-
 մանի մէջ, միայն այնպէս, որ տակը նստած
 մըուրը չը շարժի և չը պղտորէ հեղուկը
 դորա համար կործ են դնում սեփօնեան
 խողովակը: Կամ մի այն ձևի խողովակ է
 ինչպէս որ ծանրաչափինն է, միայն այն
 զանազանութեամբ, որ սորա երկու ծայ-
 բերն էլ բաց են: Կարճ սրունքը ընկղմում
 են հեղուկի մէջ, որ պիտի դատարկուի,
 միայն այդ ամանը պէտք է բարձր լինի միւս
 ամանից, որի մէջ որ պիտի թափուի դորա
 հեղուկը, խողովակի երկար սրունքով, որի
 ծայրը մտնում են այդ ամանի մէջ: Կը-
 կար խողովակի բերանից դուրս են ծծում
 նորա մէջի օղը և հեղուկը սկսում է լըց-
 նուել նորա մէջ, բարձրանալով կարճ սր-

բունքի միջով : Խողովակը հրքոր լցնելով
 փում է հեղուկով : Եւ այնուհետեւ հարկ
 կաւորվում չի ծծել : այլ թօղնվում է
 ծայրը այնպէս ամանի մէջ կախ ընկած : և
 այդպէս շարունակվում է հեղուկի ըն-
 թացքը մի ամանից մի սր քանի որ կարճ սր-
 բունքը հեղուկի մէջն է : Բայց այս հնար-
 քով միայն այն տեսակ հեղուկի ընկն
 տեղափոխում, որոնք փասակար չեն : քա-
 որում միանգամ ծծել պէտք է և ծծելու
 փամանակ կարող է բերանի մէջ թափուել
 հեղուկը և մինչև անգամ կաւ զնար : Ա-
 բիմն կթէ թիւնաւոր լինի այդ հեղուկը
 կարող է ծծողին սպանել : Եւ այդ անցար-
 մարութիւնը վերացնելու համար, երկար
 խողովակի կողքից ուրիշ մի խողովակ են
 աւելացնում զէպի վեր, այնպէս որ այս
 աւելցրած խողովակի բերանը վերեւում է :
 Իսկ երկարինը ամանի մէջ : Երբ որ այս
 աւելցրած խողովակի միջով սկսում են օ-
 գր գուրս ծծել, հեղուկը սկսում է լցնել
 և երկար խողովակի մէջ և այն տեղից ան-
 մանք թափուել ամանից մանկու աւելցր-
 րած խողովակի մէջ :
 Բայց ինչպէս համար պէտք է հեղուկը
 շարունակ թափուի անպատճառ, երբ սր-
 գէն ընդհատում են ծծելու : Երբ որ խո-
 ղովակից դուրս ենք ծծում օգր, նորա
 մէջ կազմվում է դատարկ տարածութիւն,
 որոնք համար ջուրը սկսում է բարձրանալ
 անցնելով երկար սրունքի մէջ, նա իւր
 ծանրութեամբը պիտի ցած կըթայ նորա-
 նով և թափուի Բունի որ շարունակվում
 է այսպէս հեղուկի ընթացքը, մի կողմից
 նա ծծելու պէս դատարկ տարածութիւն
 է բաց անում, միւս կողմից ջրի մասները
 բռնում են այդ դատարկ տեղը և այս

պատճառով հասումը անընդհատաբար
 շարունակվում է : Մի և նոյն փամանակ
 դրսի օգր ձնչելով ջրի վերայ, մղում է նո-
 րան զէպի խողովակը, ուր անդապար կազ-
 մվում է դատարկութիւն : Եւ այսպէս
 հեղուկի շարունակ հասումը կրակ է քանի
 որ կարճ սրունքը գտնվում է նորա մէջ :
 Մենք ինչպէս ենք շունչ առնում, խը-
 մում, կուլ սաղիս մի բան : () Գ շնչելու
 մենք լսյնացնում ենք կուրծքի բաւ այդ-
 պէսով նորա մէջ իղած օգր անօտրանում
 է, և մթնոլորտի օգր ձգտում է զէպի մեր
 բերանը և կուրծքը : Եւ առ շնչելիս կուրծք
 ներս սխմվում է և սխմած օգր գուրս
 է հրվում նորանից : Խոնկիս էլ այս մի և
 նոյն է լինում, բերանի մէջ օգր անօտրա-
 նում է, դրսի օգր այդ փամանակ ձնչում
 է հեղուկի վերայ և այդպէսով ներս է
 հրում նորան : աման միցայի փամանք լցն
 յի վայր մ մի յմայի թիւս մից յիցա բազ
 իտանք ջն յի յիցա մի ծանկ յիցայի մե
 փամր **Օրաշունչի մասին Օրապարկի** : Գրի
 սր գտնար մ յնոնագա սրո ծար մ ջն
 յնք արդէն գիտենք, որ ջրի մէջ շատ
 մարմիններ ընկզմվում են, շատերն էլ երե-
 սին մնում և լողում : Եւ այս մի և նոյնը
 լինում է և օգրի մէջ : Եւ այսպէս մենք տես-
 նում ենք, որ քարը ընկզմում է օգրի մէջ,
 իսկ ծուխը ձիւնն յիցից դուրս գալով բար-
 ձրանում է զէպի վեր կամենալով օգրի և
 բեան ընկնել : Եւ այդ ծուխն ինքր :
 Ծուխն ինքր տաքացած օգր է, որի հետ
 խառնուած են ածուխի մասուրնիւր :
 Բայց մենք արդէն գիտենք, որ մի խորա-
 նարդ օտնաշափ օգր աւելի թիւթ է, քան
 թէ մի այդչափ պաղ օգր : Աբիմն ծուխի
 ծաւալը իւր հաւասար ծաւալ ունեցող

պաղ օղից թիթե է, և դորանից է, որ նա
 կարողանում է բարձրանալ: Իսկ ածուխի
 մասնակրները, քաշվում են դէպի վեր տա-
 քացած օղի արագ ընթացքի մէջ: Թիթե
 մարմինը կսկսի վեր բարձրանալ, մինչև որ
 օղի մէջ հանդիպի այնպիսի կտրոցի, որի
 խտութիւնը հաւասար լինի իւր խտու-
 թեանը, դորանից բարձր էլ չի կարող Նը-
 թալ ըստ որում այնուհետև օղի իրանից
 թիթե կը լինի: Այսին խիթ բարակ բայց
 անուր թղթից մի գունտ շինենք և լցնենք
 դորան տաք օղով, նու պէտք է որ բարձրա-
 նայ, պատճառ՝ նորա ծաւայի կշիռը մի և
 նոյն ծաւայով օղից թիթե է: Այս տե-
 սակ գունտը ասվում է օդապարիկամ
 օդապարիկ:

Առաջին անգամը օդապարիկը շինեցին
 մետաքսից 1783 թուականին Վազղեայու-
 մը: Ղուկասի վարին մասնումը մի ծակ էին
 բաց արել, որի տակից կասել էին երկաթի
 թիւրից շինած մի արկղիկ, մէջ ձղնոտով
 լիքը: Արը որ վառում են ձղնոտը, գնաի
 մէջ եղած օղը տաքանում է և գունտը ըս-
 կսում է բարձրանալ: Բայց այս տեսակ
 անքայնելը անյարմար է և վնասնուր
 Ղուկասը կարող է շատ հեշտութեամբ
 բռնկել (վառուել), և բացի այս տաք օղը
 միայն երէք անգամ է թիթե պաղիցը, և
 այդ պատճառով շատ չի կարող բարձրա-
 նալ:

Արը որ մի նոր գազակերպ մարմնի զիւ-
 տը արին, այսինքն մի նոր մարմին գտան
 ըստին անուկով, տեսան որ դա 14 ան-
 գամ թիթե է օղից, այնուհետև սկսան
 այդ գողովը լցնել օդապարիկները: Սեժ
 օդապարիկ պատրաստելու համար մետաք-
 սէ գործուածքը յարկեցնում են բեկկոյի


իւղի մէջ լուծած աեղինով, նորան տն-
 թափանցիլութիւն տալու համար: Ղազը
 հանում են սակտուների մէջ, որոնք խո-
 ղովակներով միացած են մի մեծ ջրով լի-
 քը տակտոյի հետ, որի մէջ զազը մտքը
 վում է: Այդ տակտոյի խողովակի միջ-
 նորդութեամբ զազը լցնում են օդապարի-
 կի մէջ: Այսին մեծ լինի օդապարիկը, այն-
 քան նու շատ կը բարձրանայ և այնքան շատ
 ծանրութեաներ կարող է հետը բարձրա-
 ցնել, պատճառ՝ որքան որ իւր ծաւայը
 մեծ լինի, այնքան աւելի ծանր կը լինի իւր
 դուրս մղած օղի ծաւայը:

Օդապարիկով մարդիկ էլ են բարձրա-
 նում օղի վերայ: Ղորա համար օդապար-
 իկի վարին մասնից կասն են տակա մէջը
 աւազ ածած մի նաւակ, և նորա մէջն է
 նստում օդադնացը: Արը որ խիտա բարձ-
 րանալով հասնում է օղի այն կարգի լինի,
 որ տեղ օղի խտութիւնը հաւասարուում
 է օդապարիկի խտութեանը, այդ ժաման-
 ակ օդադնացը քիչ քիչ դուրս է թա-
 վում աւաղից, որով թիթեութիւն է
 տակա օդապարիկին և սկսում է աւելի և
 աւելի վեր բարձրանալ: Իսկ երբ որ կամե-
 նում է իջնել դէպի ցած, դորա համար
 օդապարիկի վերեւի մասնումը մի դռնակ
 կայ շինած, բայց է անում այդ դռնակը,
 այն տեղից պաղ օղ է ներս մանում, և
 այդ պատճառով օդապարիկը ծանրանում
 է և սկսում կամոց կամոց վայր իջնել:

Ամենաբեկի օդադնացութիւնը առա-
 ջին անգամ եղև 1805 թուականին: Գա-
 էր Վէյլուսականուկով մի Ղազղեայու-
 սու մնական, որ մինչև եօթը վերատ բարձ-
 րացաւ: Ղորանից յետոյ Ղրէն անուկով
 մէկը նորանից շատ բարձրացաւ: Այնքան

պէս 1863 թուականին մինչև 10 վերստ բարձրացողները կզան: Վեյլիսակը իւր օդագնացութեան ժամանակ նկատուեալ է, որ ինչքան աւելի է բարձրանուեալ, այնքան աւելի է ցածրանում: օդի բարեխառնութիւնը, այնպէս որ 6 $\frac{1}{2}$ վերստ բարձրութեան մէջ 10⁰ ցուրտ է ցոյց ապին ջերմաստիճան, մինչդեռ երկրի երկսին 30⁰ աստիճան է լինում մի և նոյն ժամանակը, ծանրաչափի մէջ ևս Տիտ գնահատեց ցածրանում է սնդիկը: Ամպերը հանդիպում են նորան թանձր մառախուղի նման, իսկ երբ սր բարձրանում է ամպերից վեր, այն տեղեւոր զանա իամից: զգումնայնաւ ճառարով

դից նորան երևում են արեգակը և աստղերը, պատճառ՝ որքան վեր է բարձրանում, այնքան մթնում է երկինքը: Թուղթը չմշկում է օդի չորութիւնից, արձակուած ասորձանակի ձայնը հաղիւ է լսելի լինում նոյն իսկ արձակողին: Յաճ զցած թռչունները քարի պէս վայր են ընկնում և չեն կարողանում թռչել օդի անօսրութեան պատճառով: Օդագնացը դժուարութեամբ է շունչ քաշում, նորա քթածակերից և աչքերից սկսում է արիւն հոսել, նորա վերայ մի տեսակ քնաառութիւն ու թուլութիւն է գայիս:



Օդապարիկը եթէ յանկարծ պատուու իջարի պէս վայր կընկնի երկրի վերայ, ուրեմն և օդագնացը կարող է դեռնին զարկեւելով շունչ փչել: Այս վտանգից ազատեւելու համար օդագնացները ստորաբար իրանց հետ վերցնում են ամպհօվանա պէս մի բան: Այդ անսահ ամպհօվանին շնորհ էն նօսրը կտաւից: Վարան շրջանպատում են շուաններով, և դոցա

ծայրերը ամբայնում են մի գամբիւղից: Այդ իսկ դամբիւղի մէջն է նստում օդագնացը, նրբոր կամկնում է ինքզինքը ցած գցել: Օդը ներքևից պահանջում է ամպհօվանուն և թող չի տալիս արագութեամբ վայր ընկնելու, և որպէս դի օդի անստիկ ընդդմութիւնից կանգնած չըմնայ վերեւումը, դորա համար նորա վերին մասից մի ծակ ունի բաց արած, որ այն տեղէն վարի

օղբ դուրս գնայ, և միանգամայն բռնած չը պահէ:



ԼԱ.

Զ. բն և օրի Բաղկացուելնը.

Մենք ծանօթացանք օղի և ջրի զանազան յատկութեանց հետ: Այժմ հարկաւոր է իմանալ թէ ի՞նչ է ինքն ըստ ինքեան օղբ և ջուրը:

Վերաւնենք մի երկաթէ թել, կորացնենք նորան, որով կունենայ երկու սրբունք՝ մինը կարճ և միւսը երկայն: Աարճ սրունքի ծայրին ամրացնենք մի կտոր ըսպունդ զինու ռզու մէջ թաթախած: Յետոյ երկաթէ թելը կորացրած կողմից ընկզմենք մի ջրով լիքը ամանի մէջ, այնպէս որ սպունդը մնայ ջրի մակերևոյթի վերայ: Այժմ այժմ վառենք զինու ռզին և նոյն ժամուն ծածկենք նորան մէկ լայնաբերան սրուակով, այնպէս որ սրուակի պունդները ջրի երեսին կաշին, մենք կը տեսնենք որ բոցը իսկոյն կը հանգչի և ջուրը կը բարձրանայ սրուակի մէջ և կը բռնի հաւասար հինգերորդ մասը սրուակի:

Սրուակից երկաթէ թելը սպունդով հանենք զգուշութեամբ, բայց ամանի ջրից գուրսը հանենք ջրի մէջը սրուակի բերանը խցանով միակենք: Չորի մէջ բերանը վակեղաց յետոյ հանենք սրուակը, ջնցիկը նորան քանի մի անգամ և բերանը կրկին ընկզմենք ջրի մէջ: Արբոր ջրի մէջ բանանք նորա բերանը, մենք կը նկատենք, որ նորա մէջ էր կը մտնի փոքր ինչ ջուր, բայց ամբողջ սրուակը չի լցնուել ջրով: Աւրեմն սրուակի մէջ մտնում է էր մէկ անոյն դաղ:

Մենք ամենայն օր տեսնում ենք, որ վառուած մարմինները, օրինակ մօմը, ճրբազը, լուցկիկը, զինու ռզին և այլն՝ օղի մէջն են այրվում: Բայց սորանից, մենք գիտենք, որ մեր սրուակը դատարկ էր, նորա մէջ օղ կար և դորա համար այրեցան նորա մէջ զինու ռզին: Էիմ տեսնենք սրուակի մէջինը օղ է, թէ մի ուրիշ բան: Այժմ որ օղ է, պէտք է որ վառած լուցկիկը այրի նորա մէջ: Այժմ վառած լուցկիկը կոխենք սրուակի մէջ, մենք կը տեսնենք, որ նա իսկոյն կը հանգչի: Սորանից երեւում է, որ օղը երկու գաղակերպ մարմնից է բաղկացած, որոնցից մէկը օգնում է այրմանը, իսկ միւսը — ու: Վորանցից առաջինը ասվում է Բն-ածին, իսկ երկրորդը՝ աղօք կամ Բորակածին:


Մենք տեսնենք նոյնպէս, որ ջուրը սրուակի միայն հինգ երորդ մասը բռնեց: Աւրեմն սրուակի մէջ եղած օղի մէկ մասը թթուածին էր, իսկ չորս մասը ազօտ:

Ծանօթանանք այժմ թթուածնի հետ: Ինուութեան մէջ գուտ թթուածին չէ գանվում, նա միշտ միացած է լինում ռզին մարմինների հետ: Թթուածին ստա-

նարու համար մենք գործ կը դնենք այն մարմինը որ յայնի է անդի կարծիք օտեր անունով: Անդիկը և թթուածինը միմեանց հետ միանալով յառաջ է եկել այն անդի կարծիք օտեր ասուածը: Եւ այց զարմանալիքան չէ՞, ի՞նչպէս են կարողացել միանալ երկու այնպիսի մարմին, որոց մինը մետաղ է և միւսը գազ և յառաջ բերել մի այնպիսի նոր մարմին, որ ոչ իւր գոյնովը և ոչ միւս յատկութիւններովը նման է այն մարմիններէց ոչ մինին, որոց միաւորութեամբն է բաղադրուել ինքը: Այս անդ մենք ծանօթանում ենք մի նոր անսակ ձգողութեան հետ, որ ավում է Բիթական ինտանսիւն: Արդու կամ մի քանի այլասեռ մարմիններ, քանի մի դիպուածների մէջ այնպէս սաստիկ ձրգվում են միմեանցից, որ բոլորովն միանում են միմեանց հետ: Այս տեսակ միաւորութիւնը ասվում է Բիթական Ինտանսիւն կամ Բիթական Բաղադրութիւն, պատճառն այս կերպով միաւորուած մարմինները ամենեւին նմանութիւն չեն ունենում իրանց բաղադրող մասուէրներէ հետ: Այս

պէս՝ անդիկը և թթուածինը եւր որ քիմիապէս միաւորվում են իրարու հետ, յառաջ է գալիս անդի կարմիր օքսիդը: Այս կերպ բաղադրուած մարմինները կարելի է միմեանցից բաժանել. օրինակ կարող ենք այժմ անդի կարմիր օքսիդը բաժանել և հետացնել միմեանցից թթուածինը և անդիկը: Այս գործողութիւնը ասվում է Բիթական Ինտանսիւն հետոյ էլ մենք կը ծանօթանանք մի քանի քիմիական միաւորութեանց հետ, առ այժմ դորա վերայ շատ չը խօսենք, ալ սկսենք վերու ձել անդի կարմիր օքսիդը:

Ա երաններ մի փոքրիկ փորձառանկան ապուած բաժակը և նորա մէջ անենք այնքան անդի կարմիր օքսիդ, որ բաժակի չորրորդ մասը լցնէ: Բաժակի բերանը խցանով փակենք և այդ խցանի միջով մտցընենք կորացրած ապակեայ խողովակի մի սրունքը: Միայն հարկաւոր է բաժակի բերանը օդախիս ամբացնել: Խողովակի երկայն սրունքի մէկ ծայրը զէպք է ընդիրդմել ամանով լէքը ջրի մէջ, իսկ միւս ծայրը կախնել թիկց: Ենձած զի յայտով



Բայց աների լուսնը չինի, եթէ դորա համար դորձ դրուի յեկտորանէ Յենարանը, ինչպէս երեւում է պատկերից, մի սխալի դաւազան է, տախտակի վերայ ամրացրած: Գաւազանից ամրացրած է մի ունելիք, որին պտուտակի միջնորդութեամբ կարելի է վեր ու վայր բարձրացնել: Աննելիքի այն մասը, որով պահպանվում է խողովակը, երկու թիթեղնաձև տախտակից է բաղկացած, դոյն մէջ դրվում է խողովակը: Ե պտուտակով սխանուում, որ մնայ պինդ բռնուած:

Մ. յս բոլորը շինելուց յետոյ, սկսելիք փորձառական բաժակը ասաքացնել կանթեղով: Տաքացնելն մենք կը նկատենք, որ բարխտառութեամբ բարձրանալու չափովը կարմիր փոշին կսկսի սևանալ և խողովակից դուրս թռչել բշտիկներ, որոնք անելի տարր կերելին, եթէ խողովակի բաց բերանը ընկզմենք ջրի մէջ: Բայց ի՞նչպէս ժողովենք այժմ բաժանուող դազը: Գորա համար վեր կառնենք մի սրուակ, բողբոջին ջրով կը լցնենք, բերանը մի թիթի կտորով կը ծածկենք և նորանձեռքով բռնելով, շուտ կրտանք գլխիվայր և բերանը կրնկզմենք ջրով դրուած ամանի մէջ: Մ. յդ տեղ եթէ հեռացնենք նորա բերանից թիթի կտորը և ջրի մէջ եղած խողովակի երկայն սրունքի ծայրը կորացնելով մտցնենք նորա մէջ, այդ ժամանակ բաժանուող դազը խողովակի միջով կը մտնէ սրուակի մէջ և իւր թիթեղութեամբը նորա վերին մասնումը հաւաքուելով կըսկսի այն տեղից դուրս մղել ջուրը: Բայց զուտ թիթուածին ստանալու համար, պէտք չէ նորան խկոյն ժողովել, հէնց որ նա կըսկսի բաժանուել: Փորձառական բաժակի

և խողովակի մէջ առաջ ող է շինում, այդ պատճառով դազի առաջին բշտիկները խանորն են շինում: Երի հետ Բայց բշտիկների երևելուց մի քանի րոպէ յետոյ, կարելի է համոզուել թէ էլ ող չը կայ այն տեղ և բաժանուողը զուտ գազ է: Երբոր այս գործողութեամբ սրուակի երեք չորրորդան կան մասը կը լցնուի գազով, այդ ժամանակ նորա բերանը ջրից չը հանած խցանով կամրացնենք և յետոյ հեռացնելով նորան, մի ուրիշ սրունակ կը դնենք տեղը, էլի առաջուան կերպով և կը շարունակենք գործողութիւնը մինչև դորան երեք չորրորդական մասն էլ լցնուի, յետոյ այդ էլ կը վերցնենք առաջուանի պէս, և երբորդ սրուակը կը դնենք, այսպէս կը շարունակենք մինչև բողբոջին աւարտել գործողութիւնը, այս ինքն մինչև բողբոջին բաժանուի թիթուածինը սնդկից:

Բայց սնդիկին ի՞նչ տեղ է հաւաքվում: Աւշ դարձնենք բաժակի վերին մասնի վերայ: Մենք այն տեղ կը նշմարենք մետաղէ փայլուն մանրիկ կտորիկներ, այդ զուտ սնդիկ է: Ե ինչ մէջ տասն բողբոջաց ընայ

Պորանով մենք համոզուեցանք որ սրնդիկի կարմիր օքսիդը բազադրեալ մարմին է, այսինքն այնպիսի մի մարմին է, որ բազադրուած է մի քանի միմեանց հետ քիմիապէս միաւորուած մարմիններից, և դորան քիմիապէս բաժանելու կամ վերլուծելու համար, հարկաւոր եղաւ բարձր բարխտառութիւն: Պորա հակառակ ոչ սրնդիկը և ոչ թիթուածինը մինչև այսօր չեն կարողացել վերլուծել, որից ենթադրվում է թէ դրանցից ոչ մինը բազադրուած մարմին չէ, այլ ինքնուրոյն մարմին է, զուտ է: Մ. յդ տեսակ մարմիններին ասում են

պարզ մարմիններ, քիմիական տարր, քիմիական անբաժանելի նիւթ, սկզբնական նիւթ և այլն: Այս անդ հարկաւոր ենք համարում յիշել, որ թէպէս և օդը բաղկացած է երկու մարմնից, սակայն այդ մարմինները քիմիապէս միաւորված չեն միմեանց հետ: Մաքուր օդը հասարակ խառնուրդ է թթուածնի ազօտի հետ, և նորա մէջ նկատելի են թթուածնի և ազօտի մասունքները:

ԼԲ.

ԹԻՆՈՒՄԻՆ.

Այժմ մի քանի փորձ կատարենք թրթուածնի վերայ: Առաձ լուցիկիը այրվում է մթնոլորտի օդի մէջ, եթէ հանդցնենք բոցը, լուցիկիկի ածխացած մասը մի առժամանակ կայծացած կը մնայ, բայց ի հարկէ չի բոցավառուել և շուտով էլ կը հանդչի: Մենք տեսանք նոյնպէս որ վտռած լուցիկիը ազօտի մէջ ընկղմելու պէս, հանդչում է: Աւրեմ մթնոլորտի օդի մէջ որ լուցիկիը այրվում է, դորա պատճառը ազօտը չէ, այլ թթուածինն է: Տեսնենք յիրաւի այդ այդպէս է:

Այրվող լուցիկին մոցնենք թթուածը նսվ լերը սրուակի մէջ, նա խսկոյն կը բոցավառուի և կըսկսի այրուել պարզ և փայլուն բոցով: Պորանից մենք տեսնում ենք, որ իրաւի այրուելը կախումն ունի օդի մէջ եղած թթուածնից:

Աւր առնինք երկաթէ կամ պողովատէ բարակ թել և փաթաթենք դորան մատիտի վերայ, և յետոյ հանենք մատիտը: Այսպէսով մենք կը ստանանք նոյն թելը զալարուած դրուժիտմբ: Պորա

մէկ ծայրը ամրացնենք խցանից, իսկ միւս ծայրից մի կտոր արեթ կապենք: Աթէ արեթը վառենք և կախ անենք թթուածնի սրուակի մէջ այդ զալարուած թելովը, մենք կը տեսնենք մի հետաքրքրական երևոյթ: Արեթը կսկսի սաստկապէս այրուել, բայց հէնց որ նորա բոցը հասնի թելին, նա էլ կսկսի այրուել փայլուն բոցով: Այդ միջոցին յառաջ է գալիս այնպիսի սաստիկ տաքութիւն, որ թելը սկսում է հալուել և հալուածի կաթիլները գնտակների պէս սկսում են դէս ու դէն նետուել սրուակի մէջ: Աթէ սրուակի մէջ ջուր չը լինի, այդ գնտակները ապակու մէջ կը հալուէին և սրուակը իւր բոլոր մասանց անհաւատար տաքանալուց կը կոտորուի խսկոյն:

Ի՞նչ յառաջ եկաւ այս տեղ: Մեր ստացած գնտակները այլ ևս զուտ երկաթ չեն, թէ և զուտ երկաթից հալուեցան: Արկաթը խառնուելով թթուածնի հետ՝ քիմիապէս միաւորվեցաւ նորա հետ, որով կազմուեցաւ մի այլ մարմին՝ որ անուանվում է երկաթի օքսիդ: Աթէ մենք այս փորձը կատարէինք կշռորդով՝ այս ինքն եթէ կշռելով իմացած լինէինք առաջ թէ որքան թթուածին կար սրուակի մէջ և որքան է մնացել այժմ, փորձը կատարուելուց յետոյ, նոյնպէս իմացած լինէինք երկաթի առաջուան կշիւը, իմանայինք և այժմեան գնտակների կշիւը, սպա կը տեսնէինք, որ այժմ քիչ թրթուածին է մնացել սրուակի մէջ, և թէ գնտակների կշիւը ծանր է առաջուան թելից: Գնտակները այնքան ծանրացած կը լինէին թելից, ինչքան ծանրութիւն որ պակսուէ է թթուածնից: Պարզ ստենք՝

այրուած թթուածինը չի ոչնչացել, այլ խառնուել է երկաթի հետ, որից յառաջ են եկել այդ գնտակները: Ասել է թէ գնտակները այժմ պէտք է աւելի ծանր լինին, իսկ սրուակի մէջ չայրուած թթուածինը այժմ պէտք է քիչ լինի, քանի որ նորա մէկ մասը իրանից հեռանալով խառնուել է նոր գնտակների հետ:

Ամենքին ծանօթ բան է ծծումբը: Մըծումբը պարզ մարմին է, ոչ հոտ ունի ոչ համ, և չի լուծվում ջրում: Այժմ տեսնենք ինչ է յառաջ գալի նորա հետ երբ որ այրվում է թթուածնի մէջ: Արկաթէ թելից ամրացնենք մի կտոր ծրծումբ և վառելով կախենք թթուածնի սրուակի մէջ: Մենք կը տեսնենք, որ ծրծումբը կսկսի այրուել գեղեցիկ երկնագոյն բոցով: Այդ միջոցին կազմվում է մի տեսակ գազ, հեղձուցիչ հոտով բոլորովին այն հոտին է նմանում, որ մենք զգում ենք ծծմբառի այրուելու ժամանակ: Արբ որ ծծումբը կայրուի բոլորովին, վեր կանենք սրուակը և բաւականին ուժով կըսկսենք ցնցահարել և յետոյ կը բանանք բերանը: Աթէ ջրի համն առնենք այժմ, մենք կզգանք թթու համ, որ առաջ չը կար ջրի մէջ: Մըծումբը թթուածնի հետ քիմիապէս միաւորուելով յառաջացաւ մի այլ մարմին՝ որ ասվում է Ռիւթ-ի Զը-Զիւլին:

Ալերջապէս մէկ փորձ էլ կայծացած ածուխի հետ անենք: Ածուխը նոյնպէս պարզ մարմին է և յայտնի է աշխարհին անունով: Աթէ կայծացած ածուխը կապենք թելիցը և կախենք թթուածնի մէջ, նա ևս կսկսի այրուել պայծառափայլ բոցով, և այդ միջոցին կը կազմուի մի նոր

միաւորութիւն — գազ, որ ասվում է աշխարհաւիտ: Թէ ճշմարիտ է որ թթուածնի մէջ ածուխը այրուելիս կազմուեցաւ մի այլ մարմին, կարելի է իմանալ և հետեւեալ օրինակից:

Մեզ արդէն ծանօթ է հանգած կիրը: Այդ կիրից փոքր ինչ զցնէք սրուակի մէջ, վերան եռցրած ջուր ածենք, սաստիկ ցընցահարենք, և յետոյ այդ սրուակը դնենք սեղանի վերայ: Արբ որ կիրը կը նստի յատակի վերայ և հեղուկը կը պարզուի, այդ պարզ հեղուկը ածենք մի մաքուր բաժակի մէջ: Այժմ այդ ջրի մէջ փոքր ինչ կիր կայ լուծուած: Աթէ այժմ ցնցահարենք այն սրուակը, որի մէջ այրեցինք ածուխը, և յետոյ ածենք նորա մէջ հանգած կրի լուծուածը, սրուակի ջուրը այնպէս կը պղտորուի, որ կաթի գոյն կըստանայ: Թող սրուակը մի առ ժամանակ հանդարտ կենայ, այդ միջոցին նորա յատակի վերայ կը նստի սպիտակ փոշի, որ է միաւորութիւնը ածխաթթուի կրի հետ, որ և ասվում է աշխարհաւիտ կամ կոնիտ: Պաւիճը չի լուծվում ջրի մէջ, այդ պատճառով է, որ նա նստում է սրուակի յատակի վերայ: Մենք արդէն տեսանք, որ կաւիճը կայծացնելիս, ածխաթթուն ցընդում է և այդպէսով կազմվում է չը հանգած կիր, որ ջրի հետ տալիս է մի այլ միաւորութիւն, այս ինքն՝ հանգած կիր:

Այս բոլոր օրինակներից երևում է, որ մարմինների այրուելու միակ պատճառը օդի մէջ թթուածին լինելն է, և այդ այրման միջոցին կազմվում են նորանոր մարմիններ: Այդ միջոցին թթուածինը միաւորվում է այրվող մարմնի հետ, և այդ

միաւորութիւնից յառաջ է գալիս մի այլ մարմին: Իսկ ազօտը այրելու ժամանակ թթուածնին մասնակից չի լինում:

Ի՞նչ բան է ջուրը: Զուրը թթուածնի և ջրածնի քիմիական միաւորութիւնն է: Օգտագարիկի մասին խօսելիս, մենք չստացինք թէ քինչպէս է ստացվում ջրածինը: Ա՛յր առնենք երկաթի փշրուներ, ջուր և ծծումբի թթվուկ: Եթէ այդ երեքին մարմինները տեղաւորենք փորձառական բաժակի մէջ, և սկսենք տաքացնել, գործ դնելով այն բոլոր եղանակը, ինչ որ գործ դրինք թթուածին ձեռք բերելու ժամանակ, կստանանք մաքուր գազ, որ և կասուի ջրածին: Այս գազը թափանցիկ է, չունի ոչ գոյն, ոչ հոտ և ոչ համ: Առաւած լուցկին այս գազի մէջ հանդուրում է, կենդանիները սորա մէջ չեն կարողանում ապրիլ:

Իայց ի՞նչ է յառաջ գալիս բաժակի մէջ երբ որ նորա մէջ ծծումբի թթվուկ են ածում: Զուրը սկսում է վերլուծուիլ, այս ինքն նորա բաղկացուցիչ մասուները, որ ջրածինն ու թթուածինն են, դոքա սկսում են բաժանուել միմեանցից: Զրածինը դուրս է գալիս ամանիցը, իսկ թթուածինը խառնվում է երկաթի և ծծումբի թթվուկի հետ և այսպէսով բաժակի մէջ ստացվում է մի տեսակ աղ, որ ասվում է երկաթի աղաւաղ: Եթէ վառենք ջրածնի բշտիկները, որոնք վեր են ցայտում ջրիցը, նոքա կը տրաքորաքին և բոց կարձակեն: Կորապատճառն այն է, որ առաջին բշտիկները խառնված են լինում խողովակների մէջ եղած օդի հետ: Աւրեմն զուտ ջրածին ստանալու համար հարկաւոր է անպատ-

ճառ քանի մի բոլոր սպասել, որ առաջին անգամ դուրս եկող պղպջակները երանց հետ բոլորովին դուրս մղեն օդը: Զրածինը այրվում է և այրուելով բաղկացնում է ջուր: Այս կարելի է ստուգել հետեւեալ կերպով: Զրածինը այրուելիս մի պաղ պնակ բռնիր բոցի վերայ և դուրս տեսնես, որ պնակի մէջ կազմվում են ջրի կաթիլներ:

ԼԳ.

Երկաթի...

Այժմ ծանօթանանք ածխաթթուի հետ:

Ա՛յր առնենք մի կտոր կաւիճ և մանրացնելով փոշիացնենք նորան: Այդ փոշիացած կաւիճի մի մասը ածենք փորձառական բաժակի մէջ և նորա վերայ ածինք թունդ քացախ: Մենք այդ ժամանակ կը նկատենք, որ փոշին կը փքուի և կերևին բշտիկներ, որոնք բաղկացած կը լինին ածխաթթուից: Այդ բաժանուող կամ դուրս եկող գազը ժողովելու համար, նոյն և մի միջոցները գործ կը դրնենք, ինչ որ թթուածին ձեռք բերելու ժամանակ: Այս կերպով կարող ենք քանի մի սրուակ ածխաթթուով լցնել:

Առաւած ծծումբը ձգենք ածխաթթուի սրուակի մէջ, նա իսկոյն կը հանդուրի: Այժմ քանի ածուխը դորա մէջ կակսի թշտշալ, որպէս թէ ջրի մէջ լինէր, և չի այրուիլ: Աւրեմն ածխաթթուն չի օգնում այրելուն:

Ածխաթթուն օդից ծանր է և այդ պատճառով կարելի է դորան մի ամանից միւս ամանի մէջ դատարկել: Ածխաթթուի շիշը թեքենք փորձառական բաժա-

կի բերանի վերայ, այդ գազը կսկսի թափուիլ բաժակի մէջ: Այս երևոյթը բնականաբար համար բաժակի մէջն ածենք կրային ջուր, յետոյ բաժակի բերանը մատով փակելով սկսենք սաստկապէս ցընցահարել, այդ ժամանակ բաժակի մէջ կը կազմուի ածխածին գազ: Ահա քեզ նշան, որ ածխածին մի մասը մտել է բաժակի մէջ: Այս փորձը յաջողութեամբ գլուխ բերելու համար պէտք է հետևել որ ածխածին թափելու ժամանակ օդի մէջ ամենափոքրիկ շարժում անգամ չը լինի: Ար բաժակի մէջ որ պիտի թափուի ածխածին, եթէ այդ բաժակի յատակին ամրացնենք մի վառած մում, գտող այդ մոմին հասնի թէ չէ, իսկոյն կը հանգչի նորա բոցը: Գուրը բաւականին շատ քանակութեամբ ածխածին է լուծում, և այդ ջրային լուծուածը բաւականին դուրեկան, թթուաշ և զովացուցիչ համ է ունենում: Ածխածին կրի հետ քիմիապէս միաւորուելով յառաջ են գալիս, կաւիձը, մարմարիոնը և կրաքարերը: Այս գազը շատ վնասակար է մարդոցը և կենդանիներին, պատճառ նոքա խեղդովում են դորա մէջ: Իտալիայում մի քարայրի անունը դրել են շան քարայր, պատճառ՝ շունը այն տեղ մտած ժամանակ սատկում, մինչդեռ մարդուն ոչ մի վնաս չի լինում: Այդ քարայրի յատակը կրաքարից է բաղկացած, որոնցից շատ ածխածին է գուրս գալիս, բայց որովհետեւ այդ գազը օդից ծանր է, այդ պատճառով մնում է յատակից կրպած, վերեւ չի բարձրանում: Եւ շունը որ մտնում է այդ քարայրի մէջ, նա յատակիցն է շունչ անում, դորա համար

է սատկում է, բայց մարդը որ մտնում է, նորա օտներն են լինում վնասակար գազի վերայ, իսկ գլուխը բարձր լինելով մաքուր օդ է շնչում և անվնաս մնում: Եւ ամպանի գինու և զելաերի ջրի մէջ ածխածին կայ: Այսպէս զելաերի ջուրը ածում ենք բաժակի մէջ՝ նորանից սկսում են պղպշակներ բարձրանալ, դա ինքն է ածխածին: Ածխածին աւելի շատ քանակութեամբ կազմվում է նիւթերի մէջ, որտեղ գինի են պատրաստում, նոյնպէս խոր փոսերի մէջ՝ որտեղ փթում են բոյսերը կամ գէշեր: Հարկաւոր է զգոյշ կենալ այսպէս տեղեր մտնել: Մանկից առաջ լաւ կը լինի եթէ մի գաւազան վառես և մտցնես նոյն տեղը, եթէ գաւազանը կսկսի այրիլ, էլ վտանգ չը կայ, իսկ եթէ կը հանգչի, այնուհետեւ մեծ զգուշութիւն պէտք է գործ դնել, եթէ մտնել անհրաժեշտ հարկաւոր էր:

Ածխածինը այրուելով թթուածնի մէջ, տալիս է ածխածին, այդ պատճառով եթէ ածուխը այրվում է այնպիսի տեղ, ուր շատ օդ կայ, ուրեմն կայ և թթուածին, այդ տեղ նոյնպէս նա դառնում է ածխածին: Բաւականաչափ օդ չեղած ժամանակը ածուխը աւելի քիչ թթուածնի հետ է միանում, քան թէ հարկաւոր էր ածխածին կազմուելու համար, և տալիս է ուրիշ գազակերպ քիմիական միաւորութիւն որ ստվում է ածխածնի օգնիչ: Այս գազը ոչ ինչ հոտ չունի, բայց շնչառութեան ժամանակ չափազանց վնասակար ներգործութիւն է անում, և մինչև անգամ մահ է պատճառում: Ածխահոտով ընկնելը յառաջ

է զալիս սոյն այս զազի ներս շնչուելովը: Այդ հոտը միշտ այն ժամանակն է լինում, երբ ածուխը շատ յամբ կերպով է այրվում, կամ երբ բոլորովին չէ այրուած դեռ ևս, սկսում են փակել վառարանի խողովակը: Այս վերջին զիպուածում ածխաթթուի օքսիդը դուրս գալու տեղ չունենալով տարածվում է սենեակի մէջ: Այն կապտազոյն բոցը, որ նկատվում է փայտի դանդաղութեամբ այրուելիս, կամ կրակի շեղջի մէջ, դա ածխածնի օքսիդի բոցն է: Գորա համար փռարանը միայն այն ժամանակ կարելի է փակել, երբոր կրակի մէջ էլ կապոյտ բոց չերևայ:

Թթուածնի ուրիշ մարմնոց հետ քիմիայէս միաւորուելը ասվում է օգնիւթացո՞ւն կամ իրո՞ւացո՞ւն: Մենք տեսանք որ թթուածինը որ միաւորվում է ուրիշ մարմնոց հետ՝ կազմվում են օգսիդներ կամ թթվուկներ, այս ինքն թթուածինը թթուացնում է այդ մարմինները: Երբոր մարմինը միաւորվում է թթուածնի քիչ քանակութեան հետ, այդ ժամանակ օքսիդ է ասվում, երբ թթուածնի քանակութիւնը շատ է լինում, այդ ժամանակ կազմվում է թթու կամ թրթվուկ: Մենք տեսանք նոյնպէս որ մարմինների թթուացումը յառաջ է գալիս բարձր բարեխառնութեան ժամանակ, բայց չը պէտք է կարծել, որ միշտ այդպէս է լինում: Այն առնենք մի երկաթի կտոր և դնենք խոնաւ տեղ, մի առ ժամանակից յետոյ երկաթը արտաքուստ կը փոխուի և կը ծածկուի կարմրավուն կեղևով, որ կարելի է դանակով քերել: Այս զիպուածումը երկաթը հասարակ բարեխառնութեան մէջ օդի թթուածնի ազդեցու-

թեամբ թթուացել է, այս ինքն միաւորուել է նորա հետ և բաղադրել երկաթի օգսիդ, դա էլ միաւորուելով օդի մէջ եղած ջրային շոգիների հետ, բաղադրել է երկաթի ջրային օգնիւթ, կամ այն՝ որ հասարակ խօսքով ասվում է Ժանգ: Այս տեղ թթուացումը շատ յամբ կերպով է յառաջ գալիս: Երկաթի օգսիդը, որ տաքացուեցաւ երկաթի թթուածնի մէջ այրուելուց՝ անջուր օգսիդ է, որ խոնաւ տեղերում փոխարկվում է ջրային օգսիդի կամ ժանգի: Եւայց երբ որ թթուացումը յառաջ է գալիս արագութեամբ, այդ ժամանակ բարեխառնութիւնը բարձրանում է և մարմինը լոյս է արձակում: Այդ զիպուածում մարմնոյ մէջ այրումն է յառաջ գալիս, ուրիմն այրումը մարմնի արագութեամբ թթուացումն է: Յամբ կերպով այրելիս և փթելիս յառաջ է գալիս և յամբ կերպով այրումն կամ թթուացումն:

(Մեջեան է յետոյս)

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԱՆՅ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐԲԷ ԵՒ ԽՈՐԷՆ ՎԱՐԳԱՊԵՏՔ

Երժ. Մամբրէ Ծ. Վարդապետ Մամիկոնեանց՝ Եռաջնորդ Բաղիշոյ, և Երժ. Խորէն Ծ. Վարդապետ Աշղեանց՝ Հայր Ս. Ե. Կուսի Վանացն Երմաշուի 1-ն ամսոյս (ի Պօլսոյ) եկին ի Մայր Եթուսի Ս. Լջմիածին:

Յիշեալ երկու Բարեշնորհ Վարդապետք ոչ միայն զիանական, այլ և ընտիր